ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2020
02.2020
03.2020
04.2020
05.2020
06.2020
07.2020
08.2020
09.2020
10.2020
11.2020
12.2020
Դեկտեմբեր

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 27-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2020

Դեկտեմբեր

թիվ 12 (268)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «Քանաքեռ» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 3 վարկային կազմակերպության նկատմամբ տուգանք կիրառելու, 4 փոխանակման կետի, 2 վարկային կազմակերպության նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 198-Ն որոշումը «2020-2021 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Առնո Բաբաջանյան-100», «Գրիգոր Տաթևացի-675», «Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ», «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ», «Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021)», «Ալեքսանդր Սպենդիարյան-150» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին»

13 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 199-Ն որոշումը «2020-2021 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

15 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ

ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրանցվել է*** *«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ»* բաց բաժնետիրական ընկերության *«ՔԱՆԱՔԵՌ» մասնաճյուղը* (որոշում թիվ 1/641Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 վարկային կազմակերպության նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 1 500 000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/674Ա, 1/675Ա, 1/676Ա), 4 փոխանակման կետի, 2 վարկային կազմակերպության ***հայտարարվել է նախազգուշացում՝*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/651Ա, 1/675Ա, 1/676Ա, 1/678Ա,1/679Ա,1/680Ա):

*2020-2021 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Առնո Բաբաջանյան-100», «Գրիգոր Տաթևացի-675», «Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ», «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ», «Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021)», «Ալեքսանդր Սպենդիարյան-150» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունները հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետը, 40-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. 2021 թվականի հունվարի 18-ից շրջանառության մեջ դնել «Առնո Բաբաջանյան-100» և «Գրիգոր Տաթևացի-675» արծաթե հուշադրամները:

2. 2021 թվականի մարտի 25-ից շրջանառության մեջ դնել «Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ», «Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ», «Գ.Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ» արծաթե հուշադրամները:

3. 2021 թվականի սեպտեմբերի 13-ից շրջանառության մեջ դնել «Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021)» արծաթե հուշադրամը:

4. 2021 թվականի հոկտեմբերի 13-ից շրջանառության մեջ դնել «Ալեքսանդր Սպենդիարյան-150» արծաթե հուշադրամը:

5. Հաստատել սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են սույն որոշման Հավելվածում (կցվում է):

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
4 դեկտեմբերի 2020 թ., N 198-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. դեկտեմբերի 1-ին (ՀՀԳՏ, 10.12.2020):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի դեկտեմբերի 1-ի
թիվ 198-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Առնո Բաբաջանյան-100» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Առնո Բաբաջանյանին և նրա կնոջը նմանեցված դիմագծերով հարսանեկան զույգ, սոլի բանալի, ոճավորված վարդ և ձայնասկավառակ: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «1000 ԴՐԱՄ» և «2021»:

Հուշադրամի դարձերեսին Առնո Բաբաջանյանի դիմապատկերն է և ձայնասկավառակի, դաշնամուրի ստեղների, նոտաների և գրչի ոճավորված պատկերներ:

Մակագրություններն են՝«ԱՐՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ», «ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ», «1921-1983» և «100 ամյակ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:

Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Առնո Բաբաջանյան-100» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Գրիգոր Տաթևացի-675» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Տաթևի վանքը: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «1000 ԴՐԱՄ» և «2021»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Գրիգոր Տաթևացու խորաքանդակը՝ Մոսկվայում Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպության հայկական եկեղեցու պատին: Մակագրություններն են՝ «ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ» և «675 ԱՄՅԱԿ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակներն են Կարապետ Աբրահամյանը (դիմերես) և Լուսինե Լալայանը (դարձերես):
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Գրիգոր Տաթևացի-675» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ»
արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին Կալկաթայի Հայոց ճեմարանի շենքի և Սուրբ Նազարեթ հայկական եկեղեցու պատկերներից հատվածներ են: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «CENTRAL BANK OF THE REBUPLIC OF ARMENIA», «2021» և «ԴՐԱՄ 1000 DRAM»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված է Հայոց ճեմարանի պատկերանիշը: Մակագրություններն են՝ «ԿԱԼԿԱԹԱՅԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ», «KOLKATA ARMENIAN COLLEGE AND PHILANTHROPIC ACADEMY» և «200 ԱՄՅԱԿ»՝ ոճավորված գրքի պատկերի ֆոնին:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	300 հատ

Էսքիզների հեղինակն է Լուսինե Լալայանը:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի հիմնադրման 200-ամյակ» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին Պետրոս Ադամյանի խաղացանկից Համլետի դերը խորհրդանշող ոճավորված պատկեր է և դերասանուհու կերպար: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «2021» և «1000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին Պետրոս Ադամյանի դիմաքանդակն է և թատրոնի շենքի գրաֆիկական պատկերը: Մակագրություններն են՝ «ԹԲԻԼԻՍԻԻ ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» և «100 ԱՄՅԱԿ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակներն են Վարդան Վարդանյանը (դիմերես), Լուսինե Լալայանը (դարձերես):
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Թբիլիսիի Պ. Ադամյանի անվ. հայկական պետական դրամատիկական թատրոնի կազմակերպման 100-ամյակ» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին Գաբրիել Սունդուկյանի հուշատախտակն է և «Պեպո» պիեսի բեմադրությունից՝ թղթի և թելի ոճավորված պատկերներ: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «2021» և «1000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են թատրոնի շենքի գծագիրը, պատկերանիշը և հայկական զարդանախշ: Մակագրություններն են՝ «100 ԱՄՅԱԿ», «ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» և «1921»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Գաբրիել Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի հիմնադրման 100-ամյակ» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021)» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը՝ հավերժության նշանի ֆոնին: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», «REPUBLIC OF ARMENIA», «2021» և «5000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին պատկերված են ոճավորված եռագույնը և զարդանախշ: Մակագրությունը՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 30 ամյակ»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	168,1 գ
Տրամագիծը	63,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	հարթ/համարակալված
Քանակը	300 հատ

Էսքիզների հեղինակներն են Հարություն Սամուելյանը (դիմերես), Վարդան Վարդանյանը (դարձերես): Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Հայաստանի Հանրապետության 30-ամյակ (1991-2021)» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Ալեքսանդր Սպենդիարյան-150» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված են Սպենդիարյանի հուշարձանը՝ Օպերայի և բալետի թատրոնի շենքի ֆոնին, և պարուհի: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ», «2021» և «1000 ԴՐԱՄ»:

Հուշադրամի դարձերեսին Սպենդիարյանի դիմապատկերն է, «Երեք արմավենի» ստեղծագործության նոտաների երկու տարբեր էջեր, ջութակի, թանաքամանի և արմավենիների ոճավորված պատկերներ: Մակագրություններն են՝ «ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆ», «ALEXANDER SPENDIARYAN», «1871-1928» և «150»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Քանակը	500 հատ

Էսքիզների հեղինակն է Վարդան Վարդանյանը:
Հուշադրամը հատվել է Լիտվայի դրամահատարանում:

«Ալեքսանդր Սպենդիարյան-150» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





*2020-2021 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 20-րդ հոդվածի 1-ին մասի «է» կետը, 40-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. 2020 թվականի դեկտեմբերի 21-ից շրջանառության մեջ դնել «Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը էսքիզների հետ միասին ներկայացված է սույն որոշման Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյան
4 դեկտեմբերի 2020 թ., N 199-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2020 թ. դեկտեմբերի 1-ին (ՀՀԳՏ, 10.12.2020):

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2020 թվականի դեկտեմբերի 1-ի
թիվ 199-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամի

Հուշադրամի դիմերեսին պատկերված է Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը: Տաճարի վերևում հայկական այբուբենի «Է» տառն է, ներքևում՝ հուշադրամի անվանական արժեքը՝ «30100 ԴՐԱՄ DRAM», իսկ տաճարից աջ՝ հուշադրամի թողարկման տարեթիվը՝ 2020: Մակագրություններն են՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA»:

Հուշադրամի դարձերեսին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի խորանն է՝ գմբեթի ներսի հատվածի ֆոնին: Մակագրություններն են՝ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ», «MOTHER CATHEDRAL OF HOLY ETCHMIADZIN» և «301 303»:

Տեխնիկական չափանիշները

Անվանական արժեքը	30100 դրամ
Մետաղը/հարգը	արծաթ 999^0
Տրամագիծը	100,0 մմ
Քաշը	1000,0 գ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ընդհատվող ատամնավոր, համարակալված
Քանակը	301 հատ

Նախագծի հեղինակն է «CIT Coin Invest AG» ընկերությունը, Լիխտենշտեյն:
Հուշադրամը հատվել է «B.H. Mayer» դրամահատարանում, Գերմանիա:

«Սուրբ Էջմիածնի Մայր Տաճար» արծաթե հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Վիճակագրական ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ վիճակագրական կոմիտեն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով՝ դեկտեմբեր ամսվա տեղեկագրում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
Էլ. փոստ՝ statistics@cba.am

«Վիճակագրական ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումներ տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝ http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 19
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների փոփոխություն
Գնաճ
Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 23
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 28
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 29
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 40
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ԿԲ-ի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 61
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 71
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 73
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գործող ապահովագրական ընկերությունների գործունեության հիմնական ցուցանիշներն ըստ ապահովագրության դասերի
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 83
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անվանում	2020 թ. նոյեմբեր	2020 թ. նոյեմբերի իրական աճի փոփոխությունը 2019 թ. նոյեմբերի նկատմամբ (%)	2020 թ. դեկտեմբեր	2020 թ. դեկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2019 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		-10.7[1]		-8.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	204302.9	-6.1	238183.4	-5.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	51352.8	2.0	91395.4	-3.0
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	240825.7	-22.0	340330.4	-17.4
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	139081.9[1]	-18.7[1]	162201.0	-22.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	632.6	3.1	732.9	-4.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	224931[1]	1.5[2]	290142[3]	-2.5[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2020 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Գների փոփոխությունը շինարարությունում	Գյուղատնտեսական արտադրանք արտադրողների իրացման գների փոփոխությունը
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	1.4	0.2[1]	0.3	1.7
Փետրվար	-0.2	-0.9	2.6	-3.2
Մարտ	0.5	-0.4	-1.7	-1.0
Ապրիլ	0.9	-1.2	0.7	-0.4
Մայիս	-0.1	-0.3	8.4	-6.9
Հունիս	-1.4	0.5	-0.9	-13.1
Հուլիս	-2.1	1.0	1.8	-11.9
Օգոստոս	-0.1	2.0	1.2	-13.9
Սեպտեմբեր	-0.2	0.9	-0.5	-3.4
Հոկտեմբեր	0.5	-0.7	0.4	0.7
Նոյեմբեր	1.3	0.9	-0.4	2.3
Դեկտեմբեր	3.4	2.6	0.0	1.4
2020 թ. հունվար - դեկտեմբերը 2019 թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ	1.2	2.4	8.7	-4.5

ԳՆԱՃ

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.8	1.8	1.4
Փետրվար	-0.5	0.6	-0.2
Մարտ	0.1	0.1	0.5
Ապրիլ	-0.3	-0.1	0.9
Մայիս	-1.0	-0.4	-0.1
Հունիս	-1.6	-1.9	-1.4
Հուլիս	-1.2	-1.9	-2.1
Օգոստոս	0.6	-0.4	-0.1
Սեպտեմբեր	0.3	0.2	-0.2
Հոկտեմբեր	0.1	0.6	0.5
Նոյեմբեր	1.0	1.1	1.3
Դեկտեմբեր	1.5	1.3	3.4
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	2.9	0.8	0.3
Փետրվար	3.3	1.9	-0.5
Մարտ	3.7	1.9	-0.1
Ապրիլ	2.4	2.2	0.9
Մայիս	1.6	2.8	1.2
Հունիս	0.9	2.5	1.7
Հուլիս	2.3	1.7	1.5
Օգոստոս	3.3	0.6	1.8
Սեպտեմբեր	3.5	0.5	1.4
Հոկտեմբեր	2.8	0.9	1.3
Նոյեմբեր	1.8	1.0	1.6
Դեկտեմբեր	1.8	0.7	3.7

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՃԻՆ [5]

Անվանում	*2020 թ. դեկտեմբերը 2019 թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
Գնաճ	**3.7**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	4.9	1.94
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	10.4	0.43
Հագուստ և կոշիկ	0.3	0.01
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.5	0.08
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	3.6	0.12
Առողջապահություն	3.9	0.37
Տրանսպորտ	4.7	0.39
Կապ	0.0	0.00
Հանգիստ և մշակույթ	-0.7	-0.02
Կրթություն	2.0	0.06
Ռեստորաններ և հյուրանոցներ	1.8	0.03
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	5.5	0.25

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ [5,6]

Ժամանակաշրջան	2018	2019	2020
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.3	-0.2	0.0
Փետրվար	0.3	0.1	0.1
Մարտ	0.2	0.1	0.0
Ապրիլ	0.2	0.0	0.5
Մայիս	-0.1	-0.1	0.0
Հունիս	-0.1	0.0	-0.1
Հուլիս	-0.2	-0.2	-0.1
Օգոստոս	0.2	0.1	0.1
Սեպտեմբեր	0.3	0.2	0.3
Հոկտեմբեր	0.5	0.1	0.3
Նոյեմբեր	0.2	0.1	0.3
Դեկտեմբեր	0.0	0.1	0.9
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.8	1.2	0.4
Փետրվար	4.1	1.0	0.4
Մարտ	4.0	0.9	0.3
Ապրիլ	3.8	0.7	0.8
Մայիս	3.4	0.7	0.8
Հունիս	3.2	0.8	0.7
Հուլիս	3.0	0.8	0.8
Օգոստոս	2.7	0.7	0.8
Սեպտեմբեր	2.6	0.6	0.9
Հոկտեմբեր	2.5	0.2	1.2
Նոյեմբեր	1.9	0.1	1.4
Դեկտեմբեր	3.4	1.8	2.2

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[5,6]

Անվանում	2020 թ. դեկտեմբերը 2019 թ. դեկտեմբերի նկատմամբ	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**2.2**	
Հաց ցորենի, բարձր տեսակի	7.5	0.30
Ալյուր ցորենի, բարձր տեսակի	10.0	0.10
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	2.0	0.09
Վիրահատական ծառայություններ	4.5	0.08
Հավի միս՝ (ամբողջական հավ) թարմ, պաղեցրած	7.8	0.07
Հնդկացորեն	21.3	0.05
Օդային տրանսպորտի միջազգային չվերթներ իրականացնող ծառայություններ	9.7	0.05
Նրբերշիկ, սարդելկա	5.3	0.04
Սուրճ աղացած	8.7	0.04
Սրտաբանական ծառայություններ	6.4	0.04
Վճարներ սգո ծիսակատարության համար	7.7	0.04
Միս խոզի՝ թարմ, պաղեցրած	-5.3	-0.04
Պաղպաղակ սերուցքային	-23.1	-0.04
Շաքարավազ	-8.5	-0.05
Միս տավարի և հորթի՝ ոսկորով՝ թարմ կամ պաղեցրած	-4.8	-0.19

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից:

[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի վերանայված տվյալների հիման վրա:

[3] Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների:

[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի նախնական տվյալների հիման վրա:

[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[6] Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2020 թ. հունվար - նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - նոյեմբերը 2019 թ. հունվար - նոյեմբերի նկատմամբ (%)	2020 թ. հունվար - դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2020 թ. հունվար - դեկտեմբերը 2019 թ. հունվար - դեկտեմբերի նկատմամբ (%)
Արտահանում (ՖՕԲ)	2285.6	94.8	2544.5	96.1
Ներմուծում (ՍԻՖ)	4070.7	84.0	4559.4	82.3
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1785.1	73.4	2014.9	70.1

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2019 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	110404	64647	45756	1055640	425984	629657
ԱՄՆ	30019	11300	18718	280911	274974	5937
Ուկրաինա	1586	1287	299	13108	14893	-1785
Ղազախստան	3104	331	2772	30688	4988	25701
Գերմանիա	4332	2620	1712	41602	41359	244
Իսպանիա	1160	1407	-247	11455	17643	-6189
Ֆրանսիա	4583	1941	2641	35346	17133	18213
ԱՄԷ	2296	2783	-487	23644	24193	-549
Չինաստան	238	6444	-6206	3705	58987	-55282
Թուրքիա	244	1228	-984	2264	10971	-8707
Այլ երկրներ	58259	56374	1884	460208	563427	-103219
Ընդամենը	**216223**	**150364**	**65859**	**1958573**	**1454552**	**504021**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2020 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	86526	40753	45773	824360	459593	364767
ԱՄՆ	53975	24252	29723	458720	162326	296394
Ուկրաինա	1719	1309	410	17109	14883	2226
Ղազախստան	4321	502	3819	24941	5624	19317
Գերմանիա	5939	3092	2848	52535	60258	-7723
Իսպանիա	1649	1281	368	12724	13591	-868
Ֆրանսիա	4990	1766	3224	44841	15421	29420
ԱՄԷ	2284	2664	-379	32629	21848	10781
Չինաստան	100	6532	-6432	2338	53746	-51408
Թուրքիա	179	1065	-886	2540	10533	-7993
Այլ երկրներ	37391	50183	-12792	368941	449516	-80574
Ընդամենը	**199074**	**133398**	**65676**	**1841679**	**1267340**	**574339**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

Երկիր	2019 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	52821	30926	21895	506407	204802	301605
ԱՄՆ	14357	5404	8953	134852	131901	2951
Ուկրաինա	759	616	143	6286	7149	-863
Ղազախստան	1485	159	1326	14722	2395	12328
Գերմանիա	2072	1253	819	19975	19823	152
Իսպանիա	555	673	-118	5502	8470	-2968
Ֆրանսիա	2191	929	1262	16967	8227	8740
ԱՄԷ	1098	1331	-233	11343	11598	-255
Չինաստան	114	3082	-2968	1784	28304	-26520
Թուրքիա	117	587	-471	1087	5266	-4179
Այլ երկրներ	27870	26954	916	221017	269972	-48954
Ընդամենը	**103438**	**71913**	**31525**	**939943**	**697906**	**242036**

մլն ՀՀ դրամ

Երկիր	2020 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար – դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	44974	21175	23800	403820	225069	178751
ԱՄՆ	28036	12589	15447	225187	79966	145222
Ուկրաինա	892	679	213	8382	7283	1098
Ղազախստան	2246	261	1985	12277	2754	9523
Գերմանիա	3081	1603	1478	25752	29164	-3412
Իսպանիա	857	663	194	6239	6656	-417
Ֆրանսիա	2592	917	1675	21981	7574	14407
ԱՄԷ	1189	1369	-180	15927	10722	5205
Չինաստան	52	3392	-3340	1144	26366	-25222
Թուրքիա	93	552	-460	1237	5152	-3915
Այլ երկրներ	19408	25973	-6564	180464	220860	-40396
Ընդամենը	**103422**	**69173**	**34249**	**902409**	**621566**	**280843**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2019	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	148.2	147.3	147.2	147.9	149.4	145.4	141.9	142.3	142.3	141.9	142.6	143.7
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	296.5	294.4	296.0	299.8	305.3	302.9	301.8	304.5	305.0	303.9	302.7	302.1
2020	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	144.3	146.9	149.7	154.1	154.3	149.6	146.7	145.7	147.0	147.1	144.5	138.7
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	300.5	307.0	312.2	319.7	321.1	316.8	318.0	317.2	321.8	322.8	314.5	293.4

[1] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների փոխարժեքները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:

[2] Բոլոր փոխարժեքները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

[3] Աճը նշանակում է արժևորում:

[4] Վերանայվել են Իրանի Իսլամական Հանրապետության փոխարժեքները, մասնավորապես՝ ազգային արժույթի փոխարժեքի մասով, սկսած 2018 թվականի հունվարից, ԻԻՀ կենտրոնական բանկի փոխարժեքների փոխարեն օգտագործվել են արտարժույթի շուկայի փոխարժեքները, իսկ ՍԳԻ հաշվարկներում՝ ԻԻՀ վիճակագրական ծառայության փոխարժեքները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2019	2020											
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ	Ն	Դ [4]
Համախառն միջազգային պահուստներ	**2849.7**	**2671.0**	**2658.9**	**2582.1**	**2491.0**	**2703.7**	**2648.2**	**2618.2**	**2658.6**	**2449.1**	**2315.9**	**2277.8**	**2614.1**
Ոսկի	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
ՀՓԻ ԱՄՀ-ում	6.2	5.1	4.1	2.7	2.7	74.4	51.0	41.0	39.7	38.1	38.2	35.4	9.0
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Արտարժույթ [2]	2843.5	2665.9	2654.8	2579.3	2488.3	2629.2	2597.2	2577.3	2618.8	2411.1	2277.7	2242.4	2605.2

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2019	2020											
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Ս [2]	Հ	Ն	Դ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**615.4**	**609.9**	**607.9**	**623.2**	**617.0**	**617.7**	**598.6**	**605.1**	**613.1**	**607.5**	**603.9**	**609.0**	**589.0**
ԱՄՀ վարկ	202.6	201.9	200.4	199.4	198.5	196.9	184.0	181.9	183.0	180.4	181.2	181.1	161.4
ՀՓԻ տեղաբաշխում	121.8	121.3	120.6	120.7	120.1	120.1	121.4	123.8	124.8	123.8	124.3	125.4	126.7
Այլ վարկեր	288.4	285.5	286.2	302.6	297.7	300.1	292.4	298.6	304.0	302.2	297.7	301.7	299.6
Այլ պարտավորություններ	2.6	1.2	0.7	0.6	0.6	0.6	0.8	0.7	1.2	1.0	0.7	0.8	1.2

[1] Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:
[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:
[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ	Պարտավորություններ Կառավարության նկատմամբ	Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	պետական պարտատոմսեր	Կառավարության ավանդներ և հաշիվներ (ներառյալ ԾԻԳ-երի միջոցները)	
2019			
Դեկտեմբեր[1]	13189	327283	**-314094**
2020			
Հունվար	13446	407200	**-393753**
Փետրվար	13422	381390	**-367968**
Մարտ	13212	362888	**-349676**
Ապրիլ	13208	368728	**-355520**
Մայիս	13400	326665	**-313265**
Հունիս	13510	432280	**-418771**
Հուլիս	13564	434652	**-421088**
Օգոստոս	13360	405016	**-391656**
Սեպտեմբեր	13467	345795	**-332328**
Հոկտեմբեր	13024	368575	**-355550**
Նոյեմբեր	13079	317945	**-304865**
Դեկտեմբեր	11535	266457	**-254922**

[1] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա [1] (մլն ՀՀ դրամ)	Շրջանառությունում կանխիկ դրամ (մլն ՀՀ դրամ)	Ցպահանջ ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M1 [2] (մլն ՀՀ դրամ)	Ժամկետային ավանդներ դրամով (մլն ՀՀ դրամ)	M2 [3] (մլն ՀՀ դրամ)	Կիսաթափանցիկ իսլամական ավանդներ (մլն ՀՀ դրամ)	M2X [4] (մլն ՀՀ դրամ)	Փողի բազմապատիկ [5]	Դրամային զանգվածի բազմապատիկ [6]
2019										
Դեկտեմբեր	1322230	502304	494571	996875	906256	1903131	1182333	3085464	2.33	2.02
2020										
Հունվար	1208164	467879	454704	922583	921304	1843887	1167120	3011007	2.49	2.03
Փետրվար	1168974	457998	458471	916468	957218	1873686	1181731	3055418	2.61	2.14
Մարտ	1243785	474829	454450	929278	935722	1865001	1209998	3074999	2.47	2.09
Ապրիլ	1222095	493455	446083	939538	937821	1877359	1134335	3011694	2.46	2.05
Մայիս	1244186	503795	465688	969483	950344	1919827	1158069	3077896	2.47	2.00
Հունիս	1265882	508657	479252	987910	971455	1959365	1130231	3089596	2.44	1.98
Հուլիս	1217809	530743	504801	1035544	994086	2029629	1138534	3168163	2.60	2.15
Օգոստոս	1263098	538312	519160	1057472	1009081	2066553	1149195	3215749	2.55	2.17
Սեպտեմբեր	1272836	550156	525270	1075426	1006426	2081851	1152674	3234526	2.54	2.12
Հոկտեմբեր	1269445	581744	504584	1086328	978373	2064702	1118579	3183280	2.51	2.21
Նոյեմբեր	1344047	594035	511017	1105052	947516	2052567	1145128	3197696	2.38	2.09
Դեկտեմբեր	1563669	648437	588305	1236742	947163	2183904	1178134	3362038	2.15	2.07

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
1600000
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
4000000
3000000
2000000
1000000
0
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
20
15
10



Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
40
35
30
25
20


ՍԵԶՈՆԱՅՆՈՐԵՆ ՀԱՐԹԵՑՎԱԾ ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ [1]


մլն ՀՀ դրամ


ժամկետ	Փողի բազա	Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	M1	M2	M2X
2019					
Հունվար	1060720	447781	847363	1536230	2710364
Փետրվար	1115866	455534	859029	1558519	2741151
Մարտ	1166603	454160	853721	1568589	2750177
Ապրիլ	1263542	444605	857090	1584931	2787835
Մայիս	1172510	440001	860547	1608752	2841471
Հունիս	1160055	444815	852274	1622090	2831213
Հուլիս	1110660	449134	855749	1634661	2818913
Օգոստոս	1136550	448586	865996	1674633	2874234
Սեպտեմբեր	1116837	454936	873478	1707170	2910877
Հոկտեմբեր	1125008	458910	885355	1735508	2933560
Նոյեմբեր	1084995	462684	900208	1772794	2942958
Դեկտեմբեր	1177091	471133	938350	1855142	2986197
2020					
Հունվար	1201250	474840	920353	1844220	2990429
Փետրվար	1171482	476286	924594	1870446	3034764
Մարտ	1205396	488884	938245	1870707	3069406
Ապրիլ	1247697	508194	958430	1894231	3046447
Մայիս	1282163	513321	985241	1930767	3107903
Հունիս	1288845	509008	998941	1970914	3131127
Հուլիս	1249943	514850	1020475	2013360	3159496
Օգոստոս	1279799	528318	1053133	2063935	3217176
Սեպտեմբեր	1266171	540315	1067703	2088517	3243888
Հոկտեմբեր	1284864	571473	1076655	2063614	3191080
Նոյեմբեր	1345207	589777	1099633	2065715	3215650
Դեկտեմբեր	1386162	614207	1167930	2112498	3267188

[1] *Փողի ագրեգատները ներկայացված են սեզոնայնությունից զտված տեսքով, ընդ որում, յուրաքանչյուր տարի փողի ագրեգատների հարթեցված շարքերը վերանայվում են և հրապարակվում «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի տարվա առաջին համարում: Շարքերի սեզոնային հարթեցումն իրականացվել է՝ օգտագործելով Census X-12-ARIMA հարթեցման եղանակը:*


Փողի բազայի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
1700000
1500000
1300000
1100000
900000
700000
500000
Փողի բազայի փաստացի շարքեր
Փողի բազայի հարթեցված շարքեր


Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
700000
600000
500000
400000
300000
200000
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի փաստացի շարքեր
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամի հարթեցված շարքեր


Դրամային զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
2500000
2100000
1700000
1300000
900000
500000
Դրամային զանգվածի փաստացի շարքեր
Դրամային զանգվածի հարթեցված շարքեր


Փողի զանգվածի փաստացի և հարթեցված մակարդակները
մլն ՀՀ դրամ
3800000
3400000
3000000
2600000
2200000
1800000
1400000
1000000
Փողի զանգվածի փաստացի շարքեր
Փողի զանգվածի հարթեցված շարքեր

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2019	2020												
	Դ[2]	Հ	Փ	Մ[2]	Ա	Մ	Հ[2]	Հ	Օ	Ս[2]	Հ	Ն	Դ[3]
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)														
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ [1]	***1071757***	***986481***	***981603***	***988175***	***898181***	***1009405***	***988627***	***977042***	***996569***	***899479***	***845056***	***845043***	***1058335***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***250472***	***221683***	***187371***	***255609***	***323913***	***234781***	***277255***	***240767***	***266529***	***373358***	***424389***	***499003***	***505334***
Կառավարություն	-314094	-393753	-367968	-349676	-355520	-313265	-418771	-421088	-391656	-332328	-355550	-304865	-254922
Բանկեր	231679	275583	216304	275054	332745	349889	364113	342552	341319	390107	412291	449633	467933
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	126670	130040	70032	150133	195028	196812	211932	188727	180113	227400	307709	342952	345953
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի ներգրավման սվոպ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Դրամական միջոցների ներգրավում (-)	-38508	0	-2200	0	0	0	-3000	-1000	0	0	0	0	-23405
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Հակադարձ ռեպո (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	0	-25958	-15288	-3416	0	0	0	0	-59723	-57155	-13919
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	332887	339853	339035	330231	346689	198157	331912	319303	316866	315579	367649	354236	292324
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***1322230***	***1208164***	***1168974***	***1243785***	***1222095***	***1244186***	***1265882***	***1217809***	***1263098***	***1272836***	***1269445***	***1344047***	***1563669***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	607209	551150	540001	554405	574368	589858	589013	612281	623037	633214	661884	675841	751466
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	304809	325527	306609	301331	301056	331312	366904	301678	299158	315969	250095	284288	275377
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	369442	288624	283265	348308	304303	281685	272951	269754	307270	286156	317442	333940	483274
Այլ հաշիվներ	40770	42863	39099	39742	42369	41331	37013	34095	33633	37498	40025	49978	53552
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	31625	33256	29221	38103	39949	38495	32807	29880	29313	32464	22137	22934	28282
Այլ հաշիվներ արտարժույթով	9144	9607	9878	1639	2420	2835	4207	4215	4320	5034	17887	27044	25270
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)														
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	-	***-85276***	***-4878***	***6573***	***-89994***	***111224***	***-20778***	***-11585***	***19527***	***-97091***	***-54422***	***-13***	***213292***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-28789***	***-34312***	***68238***	***68304***	***-89133***	***42474***	***-36488***	***25762***	***106829***	***51031***	***74615***	***6330***
Կառավարություն	-	-79660	25785	18293	-5845	42255	-105506	-2318	29432	59328	-23222	50685	49943
Բանկեր	-	43905	-59279	58750	57690	17144	14224	-21561	-1233	48788	22184	37342	18300
այդ թվում՝ ռեպո համաձայնագրեր	-	3371	-60008	80101	44894	1785	15120	-23205	-8615	47287	80309	35244	3000
Դրամական միջոցների ներգրավում (-)	-	-38508	2200	-2200	0	0	3000	-2000	-1000	0	0	0	23405
Դրամական միջոցների ներգրավման սակարկություններ (-)	-	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Զուտ այլ ակտիվներ	-	6966	-818	-8805	16458	-148532	133756	-12609	-2437	-1287	52070	-13413	-61912
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-114065***	***-39191***	***74811***	***-21690***	***22091***	***21696***	***-48072***	***45289***	***9738***	***-3391***	***74601***	***219622***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-56059	-11149	14404	19963	15490	-845	23269	10755	10177	28670	13957	75625
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	20719	-18918	-5278	-275	30256	35592	-65226	-2520	16811	-65874	34193	-8910
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-80818	-5359	65042	-44005	-22618	-8734	-3197	37515	-21114	31286	16498	149334
Այլ հաշիվներ	-	2094	-3764	643	2627	-1038	-4317	-2918	-462	3865	2527	9954	3573
Այլ հաշիվներ ՀՀ դրամով	-	1630	-4035	8881	1846	-1454	-5688	-2927	-567	3151	-10327	797	5347
Այլ հաշիվներ արտարժույթով	-	463	270	-8238	781	415	1371	8	105	713	12854	9157	-1774
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)														
ԶՈՒՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐ	-	***-8.0***	***-0.5***	***0.7***	***-9.1***	***12.4***	***-2.1***	***-1.2***	***2.0***	***-9.7***	***-6.1***	***0.0***	***25.2***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	-	***-11.5***	***-15.5***	***36.4***	***26.7***	***-27.5***	***18.1***	***-13.2***	***10.7***	***40.1***	***13.7***	***17.6***	***1.3***
Կառավարություն	-	-25.4	6.5	5.0	-1.7	11.9	-33.7	-0.6	7.0	15.1	-7.0	14.3	16.4
Բանկեր	-	19.0	-21.5	27.2	21.0	5.2	4.1	-5.9	-0.4	14.3	5.7	9.1	4.1
ՀՀ ԿԲ-ի կողմից թողարկված արժեթղթեր (-)	-	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Զուտ այլ ակտիվներ	-	2.1	-0.2	-2.6	5.0	-42.8	67.5	-3.8	-0.8	-0.4	16.5	-3.6	-17.5
ՓՈՂԻ ԲԱԶԱ	-	***-8.6***	***-3.2***	***6.4***	***-1.7***	***1.8***	***1.7***	***-3.8***	***3.7***	***0.8***	***-0.3***	***5.9***	***16.3***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-9.2	-2.0	2.7	3.6	2.7	-0.1	4.0	1.8	1.6	4.5	2.1	11.2
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով	-	6.8	-5.8	-1.7	-0.1	10.1	10.7	-17.8	-0.8	5.6	-20.8	13.7	-3.1
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով	-	-21.9	-1.9	23.0	-12.6	-7.4	-3.1	-1.2	13.9	-6.9	10.9	5.2	44.7
Այլ հաշիվներ	-	5.1	-8.8	1.6	6.6	-2.5	-10.4	-7.9	-1.4	11.5	6.7	24.9	7.1

[1] Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) ներկայացնում են փոխարկելի արտարժույթով արտաքին ակտիվների և փոխարկելի արտարժույթով ու դրամով արտաքին պարտավորությունների տարբերությունը: ԶՄՊ հաշվարկված են փաստացի փոխարժեքներով:

[2] Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

[3] Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մլն ՀՀ դրամ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2019	2020												
	Դ	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	***-1144421***	***-1070503***	***-1098345***	***-1224063***	***-1152049***	***-1150021***	***-1186807***	***-1220428***	***-1267932***	***-1271874***	***-1309458***	***-1356646***	***-1550406***
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	480818	550071	550676	486997	503075	467464	443166	466034	504963	455763	427988	441281	392668
Արտաքին պարտավորություններ փոխարկելի արտարժույթով (-)	-1396964	-1388593	-1400722	-1462688	-1398005	-1360365	-1375430	-1428882	-1515978	-1469985	-1476227	-1528879	-1671164
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով (-)	-228275	-231981	-248298	-248372	-257120	-257120	-254544	-257580	-256918	-257652	-261218	-269048	-271909
ԶՆԱ	***3704260***	***3589612***	***3675502***	***3807027***	***3651731***	***3711748***	***3773837***	***3868550***	***3958099***	***3959807***	***3922161***	***3970501***	***4265837***
Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ	555614	563247	551233	604392	603265	633437	659689	687198	700078	714704	725054	750530	802574
Պահանջներ Կառավարության նկատմամբ	594819	604179	589205	641970	643309	674836	703191	734067	748412	762452	772956	798267	837380
Պարտավորություններ Կառավարության նկատմամբ (-)	-39205	-40933	-37971	-37578	-40044	-41399	-43501	-46869	-48334	-47748	-47902	-47737	-34806
Զուտ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	586726	463104	499776	470628	383238	390507	395149	348749	387959	333009	214728	231887	418047
Պահանջներ ԿԲ-ի նկատմամբ	815714	695253	674104	727223	684259	697412	721059	652185	689281	683276	646161	698469	883111
Պարտավորություններ ԿԲ-ի նկատմամբ (-)	-228988	-232149	-174327	-256595	-301021	-306905	-325910	-303435	-301322	-350267	-431433	-466582	-465064
Տնտեսություն	3552083	3540427	3608106	3740801	3689752	3738433	3792878	3895177	3943943	3984339	4044414	4075140	4122041
Ձեռնարկություններ	1757461	1732021	1767962	1841390	1781656	1825504	1869277	1932126	1967187	1994023	2045789	2121775	2147630
Դրամով	400638	396184	394659	404332	411921	425725	450185	469406	487091	490815	504919	519587	524132
Արտարժույթով	1280920	1261613	1298776	1358952	1291523	1319743	1335510	1378770	1394229	1413589	1451055	1488245	1526794
Արժեթղթեր	75903	74224	74527	78106	78213	80036	83582	83951	85867	89618	89816	113943	96704
